Գորիսի համայնքի ղեկավար՝
Պարոն Առուշ Առուշանյանին

«Զարկերակ հարթակ» քաղաքացիական
Հասարակության զարգացման
ՀԿ նախագահ՝ Լ. Յոլյանից

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Առուշանյան, Դիմում եմ Ձեզ Հին Գորիսի քարանձավային համալիրի 53 քարանձավներից մեկում մշակութային գործունեություն ծավալելու թույլտվություն ստանալու խնդրանքով: Մեր կազմակերպությունը մշակել է «Քարանձավային բոհեմ» նախագիծը, որը նպատակ ունի ոչ միայն վերակենդանացնել պատմական այս տարածքը, այլև ապահովել դրա պահպանությունը: Քարանձավի կանոնավոր օգտագործումը և շարունակական հսկողությունը կօգնեն կանխել բնական քայքայումը: Քարանձավը կդառնա հանդիպման վայր համայնքի երիտասարդության և քաղաքի հյուրերի համար: Այստեղ զբոսաշրջիկները կկարողանան ոչ միայն ծանոթանալ մեր պատմական ժառանգությանը, այլև անմիջական շփում ունենալ տեղի երիտասարդների հետ, ճանաչել նրանց մշակույթը, ավանդույթները և ժամանակակից կյանքը:
Նախագիծը ներառում է՝ տեղական արհեստագործների ցուցադրություններ, Սյունիքի խոտաբույսերի ցուցասրահի ստեղծում, տեղեկատվական անկյուն, գրական-երաժշտական երեկոներ, մտավորականների հետ հանդիպումներ և քննարկումներ, երիտասարդական նախաձեռնությունների իրականացում, մշակութային երեկոների կազմակերպում:
Տարբեր գործընկերների, տեղական դերակատարների հետ համագործակցությամբ իրականացվող այս նախաձեռնությունը կարող է նախադեպ ստեղծել Գորիսի մյուս քարանձավների վերակենդանացման համար՝ յուրաքանչյուրին տալով իր յուրահատուկ գործառույթը: Կից ներկայացնում եմ նախագծի մանրամասն նկարագրությունը և գործունեության ծրագիրը:

Հարգանքով՝ «Զարկերակ հարթակ» քաղաքացիական
հասարակության զարգացման ՀԿ նախագահ՝

Լ. Յոլյան 08.02.2025թ.

«ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՐԿ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՄՏԻՑ 402.
10.02.2025 թ.